Արձանագրություն N4

<<ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/2-Ա>> ծածկագրով գնանշման հարցման
ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 11.07.2019թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Ալեյան
Հանձնաժողովի անդամներ՝ Է. Մխիթարյանը, Ա. Խաչատրյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

1. ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/2-Ա ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Օրակարգ՝

1. ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/2-Ա ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով (Հավելվածներ 3, 3.1 և 3.2) նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքների քննարկում:

2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ առաջին տեղ զբաղեցրած <<ՄԼԼ ԻՆԴԱՍԹՐԻԱԼ>> ՍՊ, <<Արտեզիա>> ՍՊ և <<ՀԻԴՐՈՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ>> ՍՊ ընկերությունների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/2-Ա ծածկագրով հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ եզրակացության ուսումնասիրության արդյունքների քննարկում:

2. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ <<ՄԼԼ ԻՆԴԱՍԹՐԻԱԼ>> ՍՊ, <<Արտեզիա>> ՍՊ և <<ՀԻԴՐՈՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ>> ՍՊ ընկերությունների վերաբերյալ՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/2-Ա ծածկագրով հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ հարցումը ներկայացվել է 02.07.2019 թվականին:

08.07.2019 թվականին ստացվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը:

Մասնակից ընկերությունների որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ:

<<ՄԼԼ ԻՆԴԱՍԹՐԻԱԼ>> ՍՊԸ

1. Ընկերության կողմից Հավելված 3.2-ով ներկայացված մասնագետների որակավորումը չի համապատասխանում հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված <<Աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշի պահանջներին, ներկայացված չեն նաև աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները: ներկացված Հավելված 3.2-ի աշխատանքային փորձը բաժնում նշված չեն հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների գործունեության ոլորտը և կատարված աշխատանքների ցանկը, համապատասխան աշխատանքների կատարման ժամանակահատվածը և գործատուի անվանումը,

2. Ընկերությունը առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել 1-ին և 2-րդ չափաբաժիններում, սակայն Հավելված 3.1-ով տեխնիկական միջոցները ներկայացված են միայն 2-րդ չափաբաժնի համար: Անհրաժեշտ է ներկայացնել նաև 1-ին չափաբաժնի համար պահանջվող տեխնիկական միջոցների ցանկը և համապատասխան փաստաթղթերը:

<<Արտեզիա>> ՍՊԸ

1. <<Արտեզիա>> ՍՊԸ-ն առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել երեք չափաբաժիններում, սակայն ավտոինքնաթափը ներկայացված է երկու չափաբաժնի համար՝ 3 հատ: Անհրաժեշտ է ներկայացնել ևս 2 ավտոինքնաթափի վերաբերյալ փաստաթղթեր:

<<Հիդրովերանորոգում>> ՍՊԸ

1. Ընկերության կողմից Հավելված 3.2-ով ներկայացված հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների կազմում ներկայացված չէ գեոդեզիստ որակավորմամբ մասնագետ: Ներկացված Հավելված 3.2-ի աշխատանքային փորձը բաժնում նշված չեն հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների գործունեության ոլորտը և կատարված աշխատանքների ցանկը, համապատասխան աշխատանքների կատարման ժամանակահատվածը և գործատուի անվանումը:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հանձնաժողովը որոշեց՝ Հիմք ընդունելով ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/2-Ա ծածկագրով հրավերի 7.20 կետի 2-րդ ենթակետը, <<ՄԼԼ ԻՆԴԱՍԹՐԻԱԼ>> ՍՊ, <<Արտեզիա>> ՍՊ և <<ՀԻԴՐՈՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ>> ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված որակավորման չափանիշները լիարժեք գնահատելու համար՝ առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները և ներկայացնել լրացուցիչ հիմնավորող փաստաթղթեր:

4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում (ք. Երևան, Վարդանանց 13ա):

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____ Կ. Ալեյան

_____ Է. Մխիթարյան

_____ Ա. Խաչատրյան

Քարտուղար _____ Ա. Սարգսյան